

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանին «168 ժամ» թերթի և 168.am կայքի գլխավոր խմբագիր Սաթիկ Մեյրանյանից

Հարցում

Համաձայն «ԱՄ-ՇՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով կնքված պայմանագրի՝ «Տիգրան Խաչատրյան Մեքրոպի» Ա/Չ իրականացրել է մշակույթի տան վերանորոգման շինարարական աշխատանքներ ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքում: Ըստ մեր տեղեկությունների՝ աշխատանքներն ավարտված են, ինչի մասին վկայում են համայնքի ղեկավարի՝ համապատասխան մարմիններին ուղարկված գրությունները՝ ավարտական ակտի կազմման, հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու համար հանձնաժողով ստեղծելու նպատակով թեկնածուների տվյալները տրամադրելու մասին:

Պատասխան գրությունները ստացվել են, սակայն ամիսներ են անցել, ստորագրման ենթակա փաստաթղթերը համայնքի ղեկավարի սեղանին սպասում են ստորագրման, սակայն մարզպետարանի համապատասխան պաշտոնատար անձի կողմից, ըստ մեզ հասած լուրերի, խոչընդոտվում է ավարտական կատարողական ակտի ստորագրումը:

Համայնքի ղեկավարը որակի հետ կապված առարկություններ չունի, ավելին՝ տեղում ՏԳԵՆ -ից նայել, ոչինչ չեն արձանագրել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալի վերաբերյալ.

1. Ինչո՞ւ «Տիգրան Խաչատրյան Մեքրոպի» Ա/Չ -ի կողմից շինվերանորոգման աշխատանքների ավարտից ամիսներ անց, երբ համայնքի ղեկավարը աշխատանքների որակի հետ կապված՝ առարկություններ չունի, չեն ստորագրվում համապատասխան փաստաթղթերը:

2. Ինչո՞ւ է մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին արգելում Ծաղկունք համայնքի ղեկավարին ստորագրել այդ փաստաթղթերը:

Հարգանքով՝ Սաթիկ Մեյրանյան

20, հուլիս, 2021թ.

